

ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅԱԿԱՆ

ՅԱՐՈՒԹԵԱՆ ԺԱՄԸ.

Եւրոպական պատերազմի ընդհանուր մեծ հրդեհի մէջ նետուեց նաև Տաճկաց պետութիւնը: Աստիճանաբար կազմալուծուող Տաճկաստանը, որ իւր կայսրութիւնը կառավարելու գործի մէջ ցոյց է տուել կատարեալ անանկութիւն, կորցրել է Եւրոպայում և համարեա Լեփրիկայում իւր ունեցած երկրներն ու հետզհետէ քաշոււմ է դէպի Փոքր Ասիայի ներքու երկի հեռու չէ այն ժամանակը, երբ նա բոլորովին կրվեազառնայ այնտեղ, որտեղից եկել է:

Մի կառավարութիւն, որ ընդունակ չէ բարեկարգ վիճակի մէջ պահել ոչ միայն հպատակներին, այլ իւր իսկ բուն ժողովուրդն անգամ, առանց հող տանելու բարձրացնել նորա տնտեսութիւնը, մտաւոր վիճակը, երկրի բարեկարգութիւնը և այլն և այլն, շատ բնական է՝ որ այսպիսի պետութեան դէմ ոտքի կրկանվեն ոչ միայն հպատակները՝ թոթափելու իրենց անարժան պետութեան բռնակալ լուծը, այլ նոյն իսկ իւր ժողովուրդն անգամ:

Տաճկաստանի հպատակ քրիստոնեաները, իբրև խորթ զաւակներ Տաճիկ կառավարութեան, դարեր շարունակ զրկանքների ու հալածանքների ենթարկուելով, եթէ փորձել են Եւրոպական պետութիւնների առաջ ձայն բարձրացնել իրենց դժբախտ վիճակի մասին՝ Տաճիկ կառավարութեան կողմից նոցա այդ յանդուգն քայլը պատժուել է, ենթարկուելով պարբերական կոտորածների, որոնցից մեծ բաժինն ընկել է դժբախտ հայերին:

1908 թ. Տաճիկ երիտասարդ թուրքերի շնորհիւ առաջ եկաւ Տաճկաստանի սահմանադրութիւնը: Խաւարի մէջ խարխափող ժողովուրդը վազեց ընդգրկելու այդ, ըստ երևոյթին խաբուսիկ, սահմանադրութիւնը, բայց թիթեռի

պէս այրուեցին նորա առկայծող շողշողուն ճառագայթներէն: Հայի ուրախութեան արցունքները շատ շուտով լաց ու կոծի արցունքների փոխուեցին Լեւոնայի հազարաւոր անմեղ գոհերի պատճառով: Կրկին հայր յուսախար էնախկին տանջալից վիճակի մէջ ընկաւ:

1912—13 թիւը Բաղկանեան ազգերի պատերազմով առաջ բերաւ Հայաստանի «բարենորոգութիւնների ծրագիրը» շնորհիւ Ռուսաց բարեխնամ կառավարութեան գործ դրած եռանդուն միջոցների և ազգիս Վեհափառ Հայրապետի հայրական հոգացողութեանց: Վերստին տաճկահայ բազմատանջ ժողովրդի խորտակուած յոյսերը վերակենդանութեան նշաններ ցոյց տուին: Ամեն ժամ հայր սպասում էր վերջապէս իրագործուած տեսնել տասնեակ տարիներ լոկ միայն իւր ականջին հնչուող հարաքաստիկ ամեն կողմից կրճատուած «բարենորոգութեանց ծրագիրը»:

Բայց ներկայ 1914 թ. համաւերոպական պատերազմն ուղղակի ծովը նետեց այդ յոյսն ևս: Ել ի՞նչ բարեկարգութիւն, էլ ի՞նչ «Հայկական հարց» Տաճկաց կառավարութեան համար, երբ նա «կուրացած Գերմանական-Աւստրիական կառավարութիւններից» յանդուգն կերպով պատերազմ յայտարարեց Ռուսաստանի դէմ իւր «Երկի սանձմաններն ընդարձակելու...»:

Մի կառավարութիւն, որ ոչ մի ներքին ոյժ չունի ունեցած երկիրը կառավարելու, այն երկիրը, որ ամեն կողմից գտնւում է նախնական վիճակի մէջ, դեռ յանդգնում է ուրիշ կառավարութեան հողի վրայ աչք դնել ու իւր սահմաններն ընդարձակելու մասին մտածել, բայց աւելի շուտ պատմական անստյթաք յետադարձ ոյժով ընդմիշտ կորցնելու եղածն էլ և յոխորտացող Տաճկաց կառավարութեան անունն մոռացութեան տալու:

Ո՞վ չգիտէ, որ Տաճկաց պետութիւնը վաղուց ծուստուած կըլինէր՝ եթէ Եւրոպական պետութիւններն այդ առթիւ համաձայնութեան գային: Զէ՛ որ այդ պետութեանց միմեանց մէջ ունեցած գաշնադրութեան շնորհիւն է՝ որ Տաճկաստանն իւր գոյութիւնը մինչև այժմ պահպանել է:

Բայց ասուած է՝ մինչև մարդ իւր անձի վրայ չզգայ դառնութիւնը՝ ուրիշինը չի հասկանալ, եւ այսօր, երբ Տաճիկն ինքն է պատերազմ յայտարարել Ռուսաստանի դէմ, մենք վերջապէս լսում ենք երեք մեծ պետութեանց—Ռուսաստանի, Անգլիայի, և Ֆրանսիայի վճռական խօսքը Տաճկաստանի մասին։

Ռուսաստանի Մեծահզօր Կայսրը բարեհաճեց Իւր հոկտեմբերի 20-ին հրատարակած Բարձրագոյն Հրովարտակի մէջ ասել. «Ամբողջ ռուս ժողովրդի հետ միասին Մենք աննկուն կերպով հաւատում ենք, որ Թիւրքիայի ներկայ անմիտ միջամտութիւնը պատերազմական գործողութիւններին՝ միայն կը փութացնի իրեն համար ծակատազրական անցքերի ընթացքը եւ Ռուսաստանի համար ծանալարհ կըրանայ լուծելու նախնիքներէց իրեն աւանդուած խնդիրները Սեւ ծովի ափերում»։ Իսկ Անգլիայի կառավարութեան կողմից նախարարապետ Ասկվիտը հոկտեմբերի 27-ին Հիւդ-Հոլլում ի միջի այլոց յայտարարել է հետեւելը. «Անգլիան սուրբ պատեանի մէջ չի դնի, մինչեւ որ չհնչուն թաղման զանգերը Տաճկաստանի տիրապետութեան՝ ոչ միայն Եւրոպայում, այլ նոյն իսկ Տաճկաստանի Ասիական երկրների մէջ, որովհետեւ Տաճկական կառավարութիւնն ինքնասպանութիւն է գործել եւ սեպհական ձեռքերով փորել իւր զերեզմանը»։ Ֆրանսիական կառավարութիւնն էլ լիակատար համակարծիք է այդ վճիռներին։

Տաճկաստանի բազմատանջ հայը և առհասարակ նորա այլ քրիստոնեայ հպատակները վաղուց սպասում էին այդ երեք ուժեղ պետութիւնների Տաճկաստանի համար կայացրած վերոյիշեայ ճակատազրական վճիռները լսելու, որպէսզի արմատական ճանապարհով լուծուի իրենց դժբախտ կեանքի «լինել ու չլինելու» հարցը։

Արդէն հոկտեմբերի 20-ից պատերազմի թատերաբեմ է դարձել հայկական այն վիլայէթները, որտեղ պէտք է «Բարենորոգութիւնները» մտնէին... Այժմ երեք պետութիւնների սուրն է խօսում Տաճիկ կառավարութեան հետ։ Հայ ժողովուրդն կանգնած է պատմական ճակատազրի

առաջ: Նա սպասում է Ռուսաց քաջամարտիկ զորքի յադ-
թութեան և իւր պատմական յոյսերի իրականացման:
Նորա զաւակները անձնուէր կերպով կուում են ուս-
զօրքերի շարքում դարձաւ թշնամու դէմ: Ռուս-տաճկա-
կան կռիւը առաջ է բերել հայ ժողովրդի մէջ մեծ ոգեւո-
րութիւն բնականօրէն, ամեն տեղ մեծ շափերով օգնու-
թիւն են ցոյց տալիս ով ինչով կարող է: Ձանազան կող-
մերից հայ անձնուէր կամաւորները սպասածից աւելի,
շտապում են Տաճկաստանի պատերազմի դաշտը միանալու
և աջակցելու ուս զօրքին ընդդէմ թշնամու:

Հայ ժողովրդի յուսալից կեանքի յարութեան ժամն է
հասել:

Ձնայած որ այժմ պատերազմի պատճառով բազմա-
թիւ թշուառութիւններ կանգնած են հայ ժողովրդի առաջ,
և՛ կոտորած, և՛ թալան և՛ հարստահարութիւնն և՛ երկրից
զաղթել, բայց այդ բոլորն էլ նա իւր պատմական համբե-
րութեամբ մի կերպ տանում է, մխիթարուած այն փրկա-
ւար յոյսով, որ ուս քաջամարտիկ զինուորների թնդա-
նօթների որոսումներից և իւր զաւակների թափած արիւ-
նից յետոյ՝ վերջապէս «Տաճիկ տիրապետութեան թաղման
զանգերը կընչուեն» Հայաստանում, իսկ միաժամանակ
հայ կեանքը կըվերածնունդի և ամէնքս ուրախութեան ար-
ցունքներով ցողուած միմեանց մեր բազմատանջ ժողովրդի
կեանքի յարութիւնը կաւեանք:

Ուրեմն շտապենք ամէնքս միասին օգնել և զոհենք
ով ինչ կարող է՝ որպէսզի զայ այդ ցանկալի յարութեան
ժամը:

Բաբգէն վարդապետ

Նոյեմբ. 10:

